«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18, հեռ. (+374 285) 3 31 31, էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեռնագործների 18,
Հեռ. (+374 285) 3 31 31,
էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am
Հաշվետվություն թիվ 22, 23.09.2021թ.

2021 թվականի սեպտեմբերի 15-ին տեղի է ունեցել «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ ԶՊՄԿ) 12,4999% բաժնետոմսերի սեփականատեր «Զանգեզուր Մայնինգ» ՍՊ ընկերության պահանջով և առաջարկված օրակարգով գումարված՝ Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովը:
Օրակարգ՝

1) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կողմից «ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ» բաժնետիրական ընկերությունից և «Մաքուր երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերությունից ձեռք բերված 2,061,253 (երկու միլիոն վաթսունմեկ հազար երկու հարյուր հիսուներեք) հատ հասարակ անվանական բաժնետոմսերը (յուրաքանչյուրը 20,000 (քսան հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով) մարելու (բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու և կանոնադրական կապիտալն անփոփոխ թողնելու) հարց.

2) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կանոնադրության 15–րդ կետը փոփոխելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու հարց:

Օրակարգի երկու հարցերի վերաբերյալ կազմակերպված քվեարկությունների արդյունքում ձևավորվել է ձայների նույն հարաբերակցությունը՝
- ***«կողմ»***՝ 343 539 ձայն,
- ***«դեմ»***՝ 343 542 ձայն,
- ***«ձեռնպահ»***՝ 0 ձայն:

Բաժնետոմսերի մարման և կանոնադրության փոփոխությունների հաստատման վերաբերյալ որոշումներ չեն ընդունվել՝ անհրաժեշտ թվով «կողմ» ձայներ (քվեներ) չապահովվելու պատճառով: